Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
АРМЯНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ ПЕДАГОГИЧЕСКИЙ УНИВЕРСИТЕТ ИМЕНИ Х. АБОВЯНА
ARMENIAN STATE PEDAGOGICAL UNIVERSITY AFTER KH. ABOVYAN

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ
ФАКУЛЬТЕТ ПСИХОЛОГИИ ОБРАЗОВАНИЯ И СОЦИОЛОГИИ
FACULTY OF EDUCATION PSYCHOLOGY AND SOCIOLOGY

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՄԿՐՏԻՉ ՄԱԶՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ
КАФЕДРА ПСИХОЛОГИИ ИМЕНИ АКАДЕМИКА МКРТИЧА МАЗМАНЯНА
CHAIR OF PSYCHOLOGY NAMED AFTER ACADEMICIAN MKRTICH MAZMANYAN

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ПСИХОЛОГИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ

PSYCHOLOGICAL PROBLEMS

N1(1)

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ
СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКИЕ ПОСЛЕДСТВИЯ ВОЙНЫ
SOCIO-PSYCHOLOGICAL CONSEQUENCES OF WAR

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ
МАТЕРИАЛЫ МЕЖДУНАРОДНОЙ КОНФЕРЕНЦИИ
PROCEEDINGS OF INTERNATIONAL CONFERENCE

(Երևան, Ереван, Yerevan 21-22.10.2022)

Երևան-2022

ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀՈՒԶԱԿԱՆ ԻՆՏԵԼԵԿՏԻ, ՏԱԳՆԱՊԱՅՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԳՐԵՍԻՎՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱՀԱՐԱԲԵՐԱԿՑԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Բաղդասարյան Ս.Մ.

ՀՀ պետական կառավարման ակադեմիա, ք. Երևան, ՀՀ

baghdasaryan.svetlana@mail.ru

Ամփոփագիր. Սույն հոդվածի նպատակն է դուրս բերել Արցախյան 44-օրյա պատերազմին մասնակից և նշված մարտական գործողություններին մասնակցություն չունեցած ժամկետային զինծառայողների հուզական ինտելեկտի, ագրեսիվության և տագնապայնության ցուցանիշների համահարաբերակցային վերլուծության արդյունքները: Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է զինծառայողների հոգեբանական կայունության ապահովման ուղղությամբ աշխատանքների կազմակերպման հրատապությամբ: Նպատակից ելնելով՝ անհրաժեշտություն է առաջանում դուրս բերել հուզական ինտելեկտի, տագնապայնության և ագրեսիվության դրական և բացասական կոռելացիոն փոխկապվածությունները՝ կատարելով համապատասխան եզրահանգումներ: Ստացված տվյալների համեմատական վերլուծությունը ցույց տվեց դրական կոռելացիոն կապեր հուզական ինտելեկտի, տագնապայնության և ագրեսիվության որոշ բաղկացուցիչների միջև: Հակադարձ կամ բացասական կոռելացիոն կապ է հաստատվել պատերազմին մասնակից ժամկետային զինծառայողների սեփական հույզերի կառավարման կարողության և տագնապայնության միջև, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ սեփական հույզերի կառավարման, այլ մարդկանց հույզերի ճանաչման կարողության զարգացումը կհանգեցնի մարտական գործողությունների պայմաններում ռեակտիվ կամ իրավիճակային և անձնային տագնապայնության նվազմանը՝ հնարավորություն տալով մարտական խնդիրը հաջողությամբ կատարել և վախը, տագնապը դարձնել խթանող, այլ ոչ կազմալուծող գործոն: Առաջարկվում են ռազմական անձնակազմի շրջանում հոգեբանական պատրաստության գործընթացում ընդգրկել առաջնային հատկությունների, այդ թվում հուզական ինտելեկտի զարգացմանն ուղղված գործնական նպատակային վարժանք (թրեյնինգ), որը պարբերաբար անցկացնելու դեպքում կտա ակնհայտ արդյունք և մարտի պայմաններում ռեսուրսների մոբիլիզացման կարողություն:

Հիմնաբառեր. ժամկետային զինծառայող, հուզական ինտելեկտ, տագնապայնություն, ագրեսիվություն, մարտական գործողություններ, հոգեբանական կայունություն:

Ներկայումս տնտեսական ոլորտում, գիտության և տեխնիկայի ասպարեզում տեղի են ունենում փոփոխություններ, որոնք հանգեցնում են պատերազմի վարման նոր ձևերի, միջոցների և եղանակների ստեղծմանը: Մարտական գործողությունները դառնում են արագընթաց, կարճատև, հանկարծակի՝ լի անորոշություններով ու անակնկալներով, ինչը զինծառայողին նոր պահանջներ է ներկայացնում ոչ միայն մասնագիտական, այլև հոգեբանական պատրաստության ուղղությամբ: Պատահական չէ, որ այսօր պետությունները վարում են «անշփում պատերազմներ»՝ նպատակ ունենալով տեղեկութահոգեբանական ներգործության միջոցներով և եղանակներով հոգեբանորեն ճնշել, կամքը կոտրել հակառակորդի, այդ կերպ կազմալուծելով կառավարման համակարգը, խոչընդոտելով մարտական խնդրի հաջող կատարմանը, առաջ բերելով ճիշտ որոշումների կայացման անհնարինությանը, գործելու անկարողությանը և այլն: Այս ամենը պարտադրում է

էապես վերանայել նախնառաջ զինծառայողների հոգեբանական պատրաստման համակարգերը՝ շեշտը դնելով հոգեբանական կայունության ապահովմանը, անձնային և մասնագիտական այնպիսի հատկությունների զարգացմանը, որոնք համապատասխանում են ժամանակակից պահանջներին: Ուստի առաջնային պլան է մղվում ժամկետայինից մինչև ավագ սպայական կազմի զինծառայողների հոգեբանական կայունության ապահովման ուղղությամբ աշխատանքների կազմակերպումը:

Եվ այսպես՝ հոգեբանական կայունության ապահովումը պայմանավորող գործոններից է հուզական ինտելեկտը, որն իր և իրեն շրջապատող մարդկանց հույզերը ճանաչելու և արդյունավետորեն կառավարելու ունակությունն է: «Հուզական ինտելեկտ» հասկացությունը մշակվել է այնպիսի հեղինակների կողմից, ինչպիսիք են Է. Թորնդայկը (Thorndike, 1920), Մայքլ Բելդոկը («Sensitivity to expression of emotional meaning in three modes of communication» աշխատության մեջ, 1964), Բ. Լոյնելը («Emotional intelligence and emancipation» աշխատության մեջ, 1966), Ջ. Գիլֆորդը (Guilford, 1967), Հ. Այզենկը (Айзенк, 1995) և հետագայում այլ ուսումնասիրություններ [5, c. 29 նաև՝ 1, էջ 138]: Հետագայում գիտական գրականության մեջ «հուզական ինտելեկտ» հասկացությունը մուտք է գործել 1990 թ. ամերիկացի հոգեբաններ Պ. Սոլովեյի և Ջ. Մեյերի կողմից մշակված մոդելի շնորհիվ, որի մակարդակներն, ըստ հեղինակների, յուրացվում են աստիճանաբար, օնտոգենեզի ընթացքում: Հետագայում գիտական դաշտում այս երևույթի նկատմամբ հետաքրքրությունն էլ ավելի մեծացավ՝ շնորհիվ Դ. Կառուզոյի, Դ. Գոուլմենի, Ռ. Բար-Օնի ուսումնասիրությունների, որոնք առաջ են քաշում այն միտքը, որ խաղաղ և լարված պայմաններում գործունեություն ծավալելու, մասնագիտական կարողությունները նպատակային օգտագործելու համար հարկավոր է ուշադրությունը կենտրոնացնել հուզական ինտելեկտի զարգացման վրա [3, էջ 101-110]:

Հոգեբանության բնագավառում մարդու վարքի վրա ազդող մյուս հուզական լարվածության հատուկ հոգվիճակը տագնապն է, որը վտանգի նկատմամբ հուզական հակազդման ձևերից է: Վախի հակազդման դեպքում օրգանիզմը միտված է իքնապահպանման, իսկ տագնապի դեպքում օրգանիզմի բոլոր ռեսուրսները մոբիլիզացվում են՝ անցանկալի իրադրությունը հաղթահարելու համար: Տագնապի վիճակը ծագում է անորոշության իրավիճակներում, երբ սպառնալիքի բնույթը կամ ծագման ժամանակը չի կանխատեսվում, և եթե տագնապի ինտենսիվությունն ու տևողությունը համարժեք չէ իրավիճակին, ապա այն խոչընդոտում է հարմարվողական վարքի ձևավորմանը և երբեմն հանգեցնում է հոգեկանի և վարքի կլինիկական խախտումների [6, c. 109-110]: Տագնապի հոգեբանական դրսևորումների վերլուծության հարցում մեծ է հատկապես Ջ. Թեյլորի, Ջ. Ֆրոյդի, Կ. Հորնիի, Չ. Սպիլբերգի, Ֆ. Բերյոզինի, Լ. Բոժովիչի, Ն. Լիտովի և ուրիշների դերը, որոնց աշխատանքներում արտացոլված են տագնապի վերաբերյալ սահմանումները, դրանց առաջացման և ուժեղացման պատճառները, գործունեության վրա դրական և բացասական ազդեցությունները, ինչպես նաև դրսևորման ձևերը, իսկ զինծառայողների տագնապայնության վերաբերյալ ուսումնասիրություններ ենք հանդիպում Մ. Դյաչենկոյի, Վ. Պերևալովի, Վ. Միսյուրայի, Ժ. Սենոկոսվի և ուրիշների աշխատանքներում, որտեղ շեշտը դրվում է արտակարգ պայմաններում տագնապայնության ազդեցությանը զինվորականի գործունեության արդյունավետության վրա [7]:

Ինչ վերաբերում է ագրեսիվությանը, ապա կարող ենք նշել, որ խնդրի վերաբերյալ ուսումնասիրությունները մեծ թիվ են կազմում, սակայն տարբեր գործոնների հետ համեմատության և նոր արդյունքների դուրս բերման տեսանկյունից շարունակում է մնալ արդիական: Այս երևույթը

դիտարկվում է անձնային որակ, մարդու ակտիվության և ադապտիվության անբաժան բնութագրումներից մեկը: Համարվում է, որ գոյություն ունի ագրեսիվության նորմա, որն անհրաժեշտ է արտաքին միջավայրում ակտիվ գործունեություն ծավալելու համար: Նշենք, որ ագրեսիվության վերաբերյալ ուսումնասիրություններ կարելի է հանդիպել մի շարք հեղինակների աշխատանքներում (Զ. Ֆրոյդը, Ա. Բանդուրա, Ռ. Բարոն, Լ. Բերկովիտզ, Կ. Լորենցը, Ջ. Դոլլարդ, Ն. Միլլեր, Ա. Ռեան և ուրիշներ), որտեղ արտացոլված են ագրեսիվության ծագման վերաբերյալ տարբեր մոտեցումներ, այլ գործոնների հետ համակցություններ [2, էջ 89-91]:

Այսպիսով՝ հուզական ինտելեկտի, տագնապայնության և ագրեսիվության վերաբերյալ տարբեր հեղինակների կողմից կատարած տեսական ուսումնասիրությունները թույլ են տալիս եզրակացնել, որ հոգեբանական կայունությունը պայմանավորող վերոգրյալ գործոնները մարտի պայմաններում խթանում կամ խոչընդոտում են մարտական խնդիրը հաջողությամբ կատարելու գործում: Այդ պատճառով զինծառայողից պահանջվում է բացասական, խոչընդոտող հատկությունները հաղթահարելու ունակություն:

Համաձայն առաջադրված նպատակի և խնդրի՝ ստորև ներկայացված է հետազոտության ընտրանքը և մեթոդիկան:

Հետազոտության ընտրանքը: Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ՊՆ N զորամասերում, Արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում մարտական գործողություններին մասնակից թվով 30 ժամկետային զինծառայողների և թվով 30 ժամկետային զինծառայողների շրջանում, որոնք չեն մասնակցել նշված մարտական գործողություններին:

Հետազոտության մեթոդիկան: Առաջադրված խնդրի իրականացման համար կիրառվել են թեստավորման մեթոդի համալիր մեթոդիկաներ.

1. Ն. Հոլի «Հուզական ինտելեկտ» մեթոդիկան [1, էջ 172-175],
2. Սպիլբերգի-Խանինի «Տագնապայնության չափում» մեթոդիկան [2, էջ 83-88],
3. Բասս-Պերիի «Ագրեսիվության ախտորոշման» մեթոդիկան [2, էջ 91-94]:

Արդյունքների վերլուծություն: Հետազոտվողների հուզական ինտելեկտի, տագնապայնության և ագրեսիվության համեմատությունը ցույց տվեց, որ փորձարկվող և ստուգիչ խմբերի հուզական ինտելեկտի գումարային ցուցանիշը գտնվում է միջին մակարդակում, իսկ ստանդարտ շեղումը բարձր է, ինչը նշանակում է, որ տվյալները ցրված են միջին արժեքի շուրջ. ընտրանքը միատարր չէ. 1-ին խումբ՝ ($M=39.6$, $\sigma=13.1$), 2-րդ խումբ՝ ($M=42.8$, $\sigma=19.2$): Այս ցուցանիշները փաստում են, որ երկու խմբերում ոչ բավարար չափով են տեղեկացված իրենց հուզական վիճակների մասին, դժվարությամբ են գիտակցում, հասկանում և կառավարում իրենց հույզերը, դրա փոխարեն շատ իրավիճակներում կարողանում են հասկանալ այլ մարդկանց հույզերը, կարեկցել, աջակցել նրանց: Հուզական ինտելեկտի ոչ բավարար չափով զարգացվածության մասին են վկայում նաև կատարված համահարաբերակցային վերլուծության արդյունքները:

Ինչ վերաբերում է տագնապայնությանը, ապա հետազոտության երկու խմբերում տագնապայնության մակարդակը բարձր է. 1-ին խումբ՝ ($M= 3.6$, $\sigma=0.2$), 2-րդ խումբ՝ ($M= 3.8$, $\sigma=0.1$): Ուշագրավ է ագրեսիվության ցուցանիշները փորձարկվող և ստուգիչ խմբերում, որը պատկերավոր ներկայացված է հետևյալ գծապատկերում.



Գծապատկեր 1. Փորձարկվող և ստուգիչ խմբերի ագրեսիվության ցուցանիշները.

Երկու խմբերի ագրեսիվության ցուցանիշների համեմատությունը ցույց տվեց, որ մարտական գործողությունների մասնակից զինծառայողների շրջանում ագրեսիվության ցուցանիշները գտնվում են նորմայի սահմանում, իսկ մարտում չընդգրկված զինծառայողների ագրեսիվության ցուցանիշներից՝ թշնամանքը բարձր մակարդակում է: Չնայած այն բանին, որ հոգեբանության մեջ ագրեսիան հասկացվում է որպես վարքի դեզադապտացիոն ձևի դրսևորում, ագրեսիան մարտում՝ հակառակորդի դեմ կռվելու պայմաններում, ազդում է մարտական խնդիրը հաջողությամբ կատարելու վրա, քանի որ նվազեցնում է տագնապայնությունը, որն էլ իր հերթին հնարավորություն է տալիս լարված պայմաններում պահպանել ակտիվությունը, մասնագիտական հմտությունների կիրառումը:

Ստացված տվյալները ենթարկվել են համահարաբերակցային վերլուծության Պիրսոնի բանաձևով, որի արդյունքում մարտական գործողություններին մասնակից թվով 30 ժամկետային զինծառայողների *հուզական ինտելեկտի* և *ագրեսիվության* միջև կապեր չեն հաստատվել: Դրական կոռելացիոն կապեր են հաստատվել *տագնապայնության* և *ագրեսիվության* միջև.

✓ ռեակտիվ կամ իրավիճակային տագնապայնության և թշնամանքի միջև առկա ուժեղ արտահայտված դրական կոռելացիոն կապ, $P^{**} \leq 0,01$, $r=537$,

✓ անձնային տագնապայնության և թշնամանքի միջև առկա ուժեղ արտահայտված դրական կոռելացիոն կապ, $P^{**} \leq 0,01$, $r=460$:

Ստացված արդյունքները փաստում են հետևյալը. որքան բարձր է իրավիճակային և անձնային տագնապայնությունը, համապատասխանաբար բարձր է թշնամանքի ագրեսիան: Հետևաբար կարելի է ենթադրել, որ փորձարկվող խմբի տագնապայնությունը հանգեցնում է թշնամանքի ագրեսիայի, որն ուղեկցվում է վարքային փոփոխություններով, ինչպես նաև մոբիլիզացվում են անձի պաշտպանական մեխանիզմները:

Բացասական կոռելացիոն կապեր են հաստատվել *տագնապայնության* և *հուզական ինտելեկտի* հետևյալ բաղկացուցիչների միջև.

✓ անձնային տագնապայնության, սեփական հույզերի կառավարման և այլ մարդկանց հույզերի ճանաչման միջև առկա ուժեղ արտահայտված բացասական կոռելացիոն կապ, $P^{**} \leq 0,01$, $r=-470$, $P^{**} \leq 0,01$, $r=-463$,

✓ անձնային տագնապայնության և ինքնամոտիվացիայի միջև առկա միջին արտահայտված բացասական կոռելացիոն կապ, P*≤0,05, r=-345,

✓ ռեակտիվ կամ իրավիճակային տագնապայնության և սեփական հույզերի կառավարման միջև առկա ուժեղ արտահայտված բացասական կոռելացիոն կապ, P**≤0,01, r=-414:

Ստացված արդյունքները փաստում են հետևյալը. որքան զարգացած է սեփական հույզերի կառավարման, այլ մարդկանց հույզերի ճանաչման և ինքնամոտիվացիայի կարողությունները, այդքան նվազում է անձնային և իրավիճակային տագնապայնությունը: Հետևաբար տագնապայնության հաղթահարման ուղիներից մեկը կարող է լինել սեփական հույզերի կառավարման, այլ մարդկանց հույզերի ճանաչման և ինքնամոտիվացիայի զարգացումը, որը ձեռնտու կլինի ոչ միայն լարված պայմաններում, այլ խաղաղ և կյանքի այլ իրավիճակներում:

Ստուգիչ խմբում *հուզական ինտելեկտի* և *տագնապայնության* միջև կապ չի հաստատվել: Ի տարբերություն փորձարկվող խմբի, ստուգիչ խմբում դրական կոռելացիոն կապ է հաստատվել *ագրեսիվության* և *հուզական ինտելեկտի* հետևյալ բաղկացուցիչների միջև.

✓ վերբալ ագրեսիայի և ինքնամոտիվացիայի միջև առկա միջին արտահայտված դրական կոռելացիոն կապ, P*≤0,05, r=354:

Ստացված արդյունքներից երևում է, որ վերբալ ագրեսիայի և ինքնամոտիվացիայի կապը այդքան էլ ուժեղ չէ, այսինքն ինքնամոտիվացիան և վերբալ ագրեսիան գտնվում են միջին զարգացվածության մակարդակում: Ի սկզբանե ենթադրվում էր, որ այս երկու ցուցանիշների միջև հակադարձ կապ կհաստատվի, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ թեստերը լրացրել են նորակոչիկները, կարող ենք ենթադրել, որ ինքնամոտիվացիայի միջին ցուցանիշը պայմանավորված է իրենց սեփական գործունեության, պլանների հետ և այդ ուղղությամբ համապատասխան քայլերի ձեռնարկման սահմանափակության պատճառով առաջ է գալիս վերբալ ագրեսիա նորմայի սահմանում, որն այս դեպքում պաշտպանական դեր է կատարում և կանխում է ֆիզիկական ագրեսիան:

Դրական կոռելացիոն կապ է հաստատվել *տագնապայնության* և *ագրեսիվության* հետևյալ բաղկացուցիչների միջև.

✓ ռեակտիվ կամ իրավիճակային տագնապայնության, ֆիզիկական ագրեսիայի, զայրույթի և թշնամանքի միջև առկա ուժեղ արտահայտված դրական կոռելացիոն կապ, P**≤0,01, r=503, P**≤0,01, r=459, P**≤0,01, r=590,

✓ անձնային տագնապայնության, ֆիզիզկական ագրեսիայի և զայրույթի միջև առկա միջին և ուժեղ արտահայտված դրական կոռելացիոն կապ, P**≤0,01, r=471, P*≤0,05, r=380:

Ինչպես փորձարկվող խմբում, այնպես էլ ստուգիչ խմբում որքան բարձր է իրավիճակային և անձնային տագնապայնությունը, այնքան բարձր է ագրեսիվության մակարդակը: Այսինքն հստակ աշխատանքները պետք է ուղղել տագնապայնության աստիճանի նվազեցմանը, որպեսզի չհանգեցնի ֆիզիկական ագրեսիայի, թշնամանքի և զայրույթի:

Ամփոփելով երկու խմբերում համահարաբերակցային վերլուծության արդյունքները, կարող ենք եզրակացնել, որ ժամկետային զինծառայողների անձնային և իրավիճակային տագնապայնությունը նորմայից բարձր է, որը մի խմբի դեպքում կապված է մարտի ներկայիս պահանջների փոփոխության, իսկ մյուս խմբի դեպքում տագնապայնության բարձր ցուցանիշը պայմանավորված է նորակոչիկ լինելու հանգամանքի հետ, երբ ամեն բան անորոշ է և անհասկանալի: Բացի այդ, ի տարբերություն ստուգիչ խմբի, փորձարկվող խմբում հուզական ինտելեկտի որոշ բաղկացուցիչներ

զարգացման անհարժեշտություն ունեն, քանի որ հանգեցնում են տագնապայնության: Ենթադրում ենք հետևյալը. որքան բարձր է հուզական ինտելեկտի մակարդակը, այդքան նորմայի սահմանում է տագնապայնությունը, որն իր հերթին կապված է ագրեսիայի դրսևորումների հետ: Գործոնների նման փոխպայմանավորվածության արդյունքները կարող են օգնել զինծառայողների հոգեբանական պատրաստության միջոցառումների կազմակերպման գործում:

Գրականություն

1. **Աղուզումցյան Ռ., Պետրոսյան Լ., Պողոսյան Ս. (2018)** Կառավարման հոգեբանության գործնական ուղեցույց, Եր., 208 էջ:
2. **Ավանեսյան Հ.Մ., Ասրիյան Է.Վ., Ստեփանյան Լ.Ս., Հարությունյան Ն.Ա., Հովհաննիսյան Ս.Վ. (2017)** Զինվորի հոգեկան հատկությունների գնահատման և զարգացման մեթոդներ, Եր., 186 էջ:
3. **Բաղդասարյան Ս. (2019)** Ղեկավարի, հրամանատարի հուզական բանականությունը՝ որպես արդյունավետ կառավարման կարևոր գործոն, «ՀԲ», հմ. 4, էջ 101-110.
4. **Березин Б.** Психическая адаптация и тревога. URL: https://www.psychology-online.net/articles/doc-1877.html, 10.08.2012
5. **Каравасарского Б.Д. (2004)** Клиническая психология/под ред., Питер, 539 с.
6. **Люсин Д.В., Ушаков Д.В. (2004)** Социальный интеллект: Теория, измерение, исследования. М.: Изд-во «Институт психологии РАН», 176 с.
7. **Павленко А.И.** Влияние тревожности на эффективность деятельности военнослужащих по призыву: IV международная студенческая научная конференция «Студенческий научный форум». URL: http://www.rae.ru/forum2012/290/2075, 13.06.2022.

Результаты корреляционного анализа показателей эмоционального интеллекта, тревожности и агрессии военнослужащих срочной военной службы

Багдасарян С.М.

Академия государственного управления Республики Армения, Ереван, РА

baghdasaryan.svetlana@mail.ru

Аннотация. Цель данной статьи – вывести результаты корреляционного анализа показателей эмоционального интеллекта, агрессивности и тревожности военнослужащих срочной военной службы, участвующих в 44-дневной Арцахской войне и не принимавших участия в указанных боевых действиях. Актуальность работы обусловлена важностью и срочной необходимостью организации работ по обеспечению психологической устойчивости военнослужащих. Исходя из поставленной цели, была установлена положительная и отрицательная корреляция между эмоциональным интеллектом, тревожностью и агрессивностью, выдвигая соответствующие выводы. Сравнительный анализ полученных данных показал положительную корреляцию между эмоциональным интеллектом, тревожностью и некоторыми компонентами агрессии. Установлена положительная и отрицательная корреляции между способностью управлять собственными эмоциями и тревожностью военнослужащих срочной военной службы, участвовавших в войне, что позволяет сделать вывод, что развитие способности управлять своими эмоциями, распознавать эмоции других людей приведет к снижению реактивной или ситуативной и личностной тревожности в условиях боевых действий, что

позволит успешно выполнять боевую задачу, сделать страх и тревогу стимулирующими, а не дезинтеграционными факторами. Предлагается включить в процесс психологической подготовки среди военнослужащих практическое целевое обучение (трейнинг), направленное на развитие первичных качеств, в том числе эмоционального интеллекта, которое при регулярном проведении даст очевидный результат и возможность мобилизации ресурсов в условиях боя.

Ключевые слова: военнослужащий срочной военной службы, эмоциональный интеллект, тревожность, агрессивность, боевые действия, психологическая стабильность.

Correlation analysis outcome of emotional intelligence, anxiety and aggressiveness indicators among the military conscripts

Baghdasaryan S.M.

Public Administration Academy of the Republic of Armenia, Yerevan, Armenia

baghdasaryan.svetlana@mail.ru

Abstract: The purpose of this article is to present the results of a correlation analysis emotional intelligence, aggressiveness and anxiety indicators among the conscripts who have participated in the 44-day Artsakh war also those who have not been engaged in the mentioned combat operations. The relevance of the work is due to the importance and urgent need to organize activities to ensure the psychological stability of military personnel. Based on this goal, a positive and negative correlation was established between emotional intelligence, anxiety and aggressiveness, putting forward appropriate conclusions. A comparative analysis of the data obtained, showed a positive correlation between emotional intelligence, anxiety and some elements of aggression. Positive and negative correlations have been established between the ability to manage one's own emotions and the anxiety of conscripts who were engaged in the operations, which allows us to conclude that the development of the ability to manage one's emotions, recognize the emotions of other people will lead to a decrease in reactive or situational and personal anxiety in combat conditions, which will lead to successfully perform a combat task, make fear and anxiety a stimulating, not disintegrating factors. It is proposed to include practical targeted exercise (training) in the process of psychological training among military personnel, aimed at developing primary qualities, including emotional intelligence, which, if carried out regularly, will give an obvious result and the ability to mobilize resources in combat conditions.

Keywords: military conscript, emotional intelligence, anxiety, aggressiveness, combat operation, psychological stability.

Հոդվածը ներկայացվել և ուղարկվել է գրախոսման՝ 11.04.2022

Հոդվածը ընդունված է հրատարակման՝ 12.09.2022